

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 5

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2020-2021 ուս. տարվա
գիտական խորհրդի նիստի

ք.Երևան

02 փետրվարի 2020թ.

Ներկա էին՝ գիտխորհրդի 24 անդամներից 18-ը (ներկայաթերթիկը կցված է):

Նախագահ՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ., պրոֆ. Ա. Սաղյան

Գիտական քարտուղար՝ ք.գ.թ. Ա. Դադայան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Ֆարմացիայի ինստիտուտում նոր մագիստրոսական ծրագրերի հայտերի հաստատման հարցը: **Ջեկուցող՝ Ա. Սաղյան**
2. Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմքիմիայի և ֆարմակոգնոզիայի ամբիոնի ասիստենտ, ք.գ.թ. Սաթենիկ Ղուկասի Պետրոսյանի դոցենտի կոչում ստանալու գործընթացը սկսելու հարցը: **Ջեկուցող՝ Ա. Սաղյան**
3. ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի կողմից անցկացվող Գիտական եվ գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների հայտերի մրցույթին մասնակցելու և ֆինանսավորում ստանալու համար Ֆարմացիայի ինստիտուտի աշխատակիցների կողմից ներկայացվող հայտերի երաշխավորման հարցը:
4. Ընթացիկ հարցեր:
 - 4.1. Ֆարմացիայի ինստիտուտի 2020-2021 ուս. տարվա ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ձևավորման և պաշտպանության կարգի հավելվածի քննարկում և հաստատում:

Ջեկուցողներ՝

- Մագիստրոսական թեզերը վերահսկող հանձնաժողովի նախագահ՝ ք.գ.թ. Ա. Դադայան
- Ավարտական աշխատանքները վերահսկող հանձնաժողովի նախագահ՝ ք.գ.թ. Տ. Սարգսյան

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՎ ՈՐՈՇԵՑԻՆ՝

- 1. Ֆարմացիայի ինստիտուտում նոր մագիստրոսական ծրագրերի հայտերի հաստատման հարցը:**

Լսեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի տնօրենի պաշտոնակատար, ակադեմիկոս Ա. Սադյանը, ով գիտխորհրդի անդամներին մանրամասն ներկայացրեց երկու նոր մագիստրոսական ծրագրերի հայտերը՝ «Դեղերի որակի վերահսկում» և «Կլինիկական դեղագիտություն» մասնագիտացումներով: Ա. Սադյանը նշեց այդ ծրագրերի կարևորությունը՝ դեղարդյունաբերության ոլորտում միջազգային չափորոշիչներին համապատասխան բարձր որակավորում ունեցող մասնագետների պատրաստման գործընթացում:

Ելույթ ունեցան նաև գիտխորհրդի անդամներ Ա. Հովհաննիսյանը, Ա. Սահակյանը, Ռ. Հովհաննեսյանը, Ա. Մկրտչյանը, ուսանողներ՝ Էմմա Մարկոսյանը, Անի Խաչատրյանը, ովքեր կողմ արտահայտվեցին նոր մագիստրոսական ծրագրեր բացելուն: Ելույթ ունեցողներն առաջարկեցին հաստատել նոր մագիստրոսական ծրագրերի հայտերը:

Որոշեցին՝

1. Հաստատել նոր մագիստրոսական ծրագրերի հայտերը՝ «Դեղերի որակի վերահսկում» և «Կլինիկական դեղագիտություն» մասնագիտացումներով:
 2. Սույն որոշումը ներկայացնել ԵՊՀ Որակի ապահովման կենտրոն:
- 2. Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմքիմիայի և ֆարմակոգնոզիայի ամբիոնի ասիստենտ, ք.գ.թ. Սաթենիկ Ղուկասի Պետրոսյանի դոցենտի կոչում ստանալու գործընթացը սկսելու հարցը:**

Լսեցին՝ Գիտական խորհրդի նախագահ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա. Սադյանը և գիտական քարտուղար, ք.գ.թ. Ա. Դադայանը: Ելույթ ունեցողները նշեցին, որ դոցենտի կոչման հավակնորդ Ս.Ղ. Պետրոսյանի գիտամանկավարժական գործունեությունը, գիտական աստիճանը և աշխատանքային ստաժը բավարարում են ՀՀ ԲՈԿ-ի կողմից դոցենտի կոչման համար ներկայացվող պահանջներին: Ս.Ղ. Պետրոսյանը դասախոսություն է կարդում «Թունաբանական քիմիա» առարկայից: Նա ղեկավարում է ավարտական

աշխատանքներ, մագիստրոսական թեզեր: Ս. Պետրոսյանը հեղինակ է 20 գիտական հոդվածների որոնցից 7-ը՝ բարձր ազդեցության գործակից ունեցող գիտական հանդեսներում: Վերջին երեք տարում հրատարակել է 2 գիտական հոդված և 1 ուսումնասմեթոդական աշխատանք:

Ելույթ ունեցան՝ Ֆարմաբիմայի և ֆարմակոգնոզիայի ամբիոնի վարիչ Հ. Սիմոնյանը, դոցենտ Կ.Պետրոսյանը և Ֆարմացիայի ինստիտուտի փոխտնօրեն ք.գ.թ. Ս. Վարդապետյանը: Նրանք նշեցին, որ Սաթենիկ Պետրոսյանը բացի մանկավարժական գործունեություն ծավալելը հանդիսանում է նաև Ֆարմացիայի ինստիտուտի մեթոդական խորհրդի նախագահը: Ելույթ ունեցողները նշեցին, որ Ս. Պետրոսյանը աշխատասեր և պրպտող գիտնական է, լավ մանկավարժ և արժանի է կրելու դոցենտի կոչում:

Որոշեցին՝ Փակ գաղտնի քվեարկություն անցկացնելու համար ընտրել հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով. նախագահ՝ ք.գ.թ. Ս. Ափոյան, անդամներ՝ ք.գ.թ. Ս. Շեյրանյան և Է. Մարկոսյան: Ընտրություններից հետո գիտական խորհուրդը (նիստին մասնակցում էին խորհրդի 24 անդամներից 18-ը) լսեց հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը, համաձայն որի, փակ գաղտնի քվեարկությանը մասնակցել էին խորհրդի 18 անդամներ: Սաթենիկ Ղուկասի Պետրոսյանի դոցենտի կոչում շնորհելուն կողմ էր քվեարկել 16 անդամ, դեմ՝ 1, անվավեր էր՝ 1 քվեաթերթ:

Խորհուրդը բաց քվեարկությամբ հաստատեց հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը և երաշխավորեց Ս.Ղ. Պետրոսյանին՝ դոցենտի (Բ.00.10- «Կենսօրգանական քիմիա») կոչում ստանալու գործընթացը սկսելու համար:

3. ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի կողմից անցկացվող Գիտական եվ գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների հայտերի մրցույթին մասնակցելու և ֆինանսավորում ստանալու համար Ֆարմացիայի ինստիտուտի աշխատակիցների կողմից ներկայացվող հայտերի երաշխավորման հարցը:

Լսեցին՝ Գիտական խորհրդի նախագահ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա. Սաղյանին, ով տեղեկացրեց, որ թեմատիկ ֆինանսավորման նպատակով Ֆարմացիայի ինստիտուտի աշխատակիցների կողմից ներկայացվել են 2 հայտ՝ Ս. Բաղայանի և Հ. Սիմոնյանի կողմից, որոնք անհրաժեշտ է երաշխավորել մրցույթին

մասնակցելու համար: Ա. Սաղյանն առաջարկեց հայտերի ղեկավարներին համառոտ ներկայացնել թեմաների շրջանակներում նախատեսվող աշխատանքները:

Ելույթ ունեցան՝ Ֆարմքիմիայի և ֆարմակոգնոզիայի ամբիոնի վարիչ ք.գ.թ., դոցենտ Հայարփի Միմոնյանը և կենսաբժշկագիտության ամբիոնի պրոֆեսոր, կ.գ.դ. Սուսաննա Բադայանը, ովքեր համառոտ ներկայացրեցին թեմատիկ ֆինանսավորման նպատակով ներկայացված հայտերի բովանդակությունը և պատասխանեցին հարցերին: Գիտխորհրդի նախագահ Ա. Սաղյանն առաջարկեց ներկայացված հայտերը երաշխավորել մրցույթին մասնակցելու համար, քանի որ դրանք ներկայացվել և քննարկվել են ինստիտուտի ամբիոնների նիստերում և գնահատվել են դրական:

Որոշեցին՝ (միաձայն) ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի կողմից անցկացվող Գիտական եվ գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների հայտերի մրցույթին մասնակցելու և ֆինանսավորում ստանալու համար երաշխավորել հետևյալ հայտերը.

1. «Ոչ սպիտակուցային ալֆա-ամինաթթուների և պեպտիդների վրա հիմնված համակարգերի սինթեզ և կենսաբանական գնահատում»: (Ղեկավար՝ Հ. Միմոնյան)
2. «Հայաստանի ազարիկոմիցետային ուտելի սնկերի և դեղասնկերի ռեսուրսային ներուժի գնահատումը նրանց կենսատեխնոլոգիական և կենսաբժշկական կիրառման նպատակով»: (Ղեկավար՝ Ս. Բադայան)

4. Ընթացիկ հարցեր:

- 4.1. Ֆարմացիայի ինստիտուտի 2020-2021 ուս. տարվա ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ձևավորման և պաշտպանության կարգի հավելվածի քննարկում և հաստատում:

Լսեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի մագիստրոսական թեզերը և ավարտական աշխատանքները վերահսկող հանձնաժողովների նախագահ ք.գ.թ. Ա. Դադայանին և ք.գ.թ. Տ. Սարգսյանին, ովքեր գիտխորհրդի անդամներին ներկայացրեցին մագիստրոսական թեզի և ավարտական աշխատանքի ձևավորման ու պաշտպանության կարգի հավելվածի նախագիծը, որը կազմվել

է՝ հիմք ընդունելով ԵՊՀ մագիստրոսական թեզի և ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման կարգ» փաստաթուղթը (նախագիծը կցվում է): Նրանք տեղեկացրեցին, որ հավելվածը կազմելիս առաջնորդվել են «Ֆարմացիա» մասնագիտության առանձնահատկություններով: Ելույթ ունեցողները նշեցին, որ հավելվածի նախագիծը քննարկվել է ինչպես ներամբիոնային, այնպես էլ՝ միջամբիոնային նիստերում և ստացել դրական արձագանք:

Ելույթ ունեցան՝ գիտխորհրդի անդամներ ք.գ.թ. Ա. Մկրտչյանը, կ.գ.թ. Ա. Հովհաննիսյանը, ք.գ.թ. Հ. Սիմոնյանը, ովքեր նշեցին, որ վերոնշյալ փաստաթղթում կատարված լրացումներն անհրաժեշտ են հատկապես Ֆարմացիայի ինստիտուտում կատարվող ավարտական աշխատանքների բովանդակությունն առավել հստակ և մանրակրկիտ ներկայացնելու համար: Ելույթ ունեցողներն առաջարկեցին հաստատել վերը նշված նախագիծը և մագիստրոսական թեզերի ու ավարտական աշխատանքների ձևակերպման ժամանակ առաջնորդվել հավելվածում ներկայացված դրույթներով:

Որոշեցին՝ (միաձայն) հաստատել մագիստրոսական թեզի և ավարտական աշխատանքի ձևավորման և պաշտպանության կարգի հավելվածի նախագիծը:

**Գիտական խորհրդի նախագահ՝
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ, պրոֆ.**

Ա. Սադյան

Գիտական խորհրդի քարտուղար՝ ք.գ.թ.

Ա. Դադայան